

«ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ



2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ավարտված տարվա համար
ՄԻՋԱՆԿՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2016թ.



1. Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն գրանցվել է 04 դեկտեմբերի 2007 թվականին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ ՀՀ ԿԲ) կողմից N 21 արտոնագրային համարով՝ «Ավանգարդ Ինվեստ» ՈՒՎԿ ՓԲԸ անվամբ և ՀՀ ԿԲ Խորհրդի 2012 թվականի փետրվարի 3-ի թիվ 1/70 Ա որոշման համաձայն վերանվանվել է՝ «ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ:

Ընկերությունը գործում է ՀՀ Մահմանադրությանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքին, «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքին, այլ իրավական ակտերին և իր կանոնադրությանը համապատասխան և վերահսկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից:

Ընկերության հիմնական գործունեությունը՝ միկրո առևտրային, սպառողական, վարկերի տրամադրումն է, ինչպես նաև «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով և ենթաօրենսդրական իրավական ակտերով ունիվերսալ վարկային կազմակերպությունների համար թույլատրված այլ գործունեության իրականացումը:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք վերապահված են բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը, իրականացնում է Ընկերության տնօրենների խորհուրդը: Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության տնօրենը, ով հաշվետու է Ընկերության տնօրենների խորհրդին և բաժնետերերի ընդհանուր ժողովին:

Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընտրված վերստուգողի կողմից:

2015թ-ի ապրիլ ամսվանից Ընկերության միակ բաժնետերն է հանդիսանում «4finance Holding S.A.» միջազգային ֆինանսական կազմակերպությունը:

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության, Երևան քաղաքի, Կ. Ուլնեցու 58/1 հասցեում տեղակայված գլխամասային գրասենյակի, ինչպես նաև Երևան քաղաքում գործող 1 մասնաճյուղի միջոցով:

Ընկերության աշխատակիցների ցուցակային թվաքանակը 31 դեկտեմբերի 2015թ.-ի դրությամբ՝ 22 (31 դեկտեմբերի 2014թ.՝ 16):

2. Հայաստանյան գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է հիմնականում Հայաստանում: Հետևաբար Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Որպես զարգացող շուկա, Հայաստանը չունի կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող զարգացած երկրներում:

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն դրանք ենթակա են հաճախակի փոփոխությունների և կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Հետևաբար, Հայաստանում ծավալված գործունեությունը կապված է որոշակի ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն զարգացած երկրների շուկաներին: Նման ռիսկերը և դրանցից բխող

հետևանքները կարող են ազդեցություն թողնել Ընկերության գործունեության վրա կանխատեսելի ապագայում:

Սույն ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

3. Պատրաստման հիմունքները

3.1. Հայտարարություն համապատասխանության մասին

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀ «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքին, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին («ՖՀՄՍ») և այլ իրավական ակտերին համապատասխան:

3.2. Չափման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների համար: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են համապատասխանաբար ամորտիզացված և սկզբնական արժեքի սկզբունքով:

3.3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Ընկերությունը: Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը ՀՀ դրամն է, քանի որ այս արժույթը լավագույն ձևով է արտացոլում ֆինանսական արդյունքների հիմքում ընկած և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով: Ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար դրամը:

3.4. Վերադասակարգումներ և ճշգրտումներ

Անհրաժեշտության դեպքում, համադրելի թվերը ճշգրտվել են՝ ընթացիկ հաշվետու ժամանակաշրջանում ներկայացման փոփոխությունների հետ համադրելիությունն ապահովելու համար:

3.5. Ստորագրումը

Սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2016թ.-ի հունվարի 14-ին գործադիր տնօրեն Արտաշես Տոնոյանի և գլխավոր հաշվապահ Մարինե Դարբինյանի կողմից:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1. Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն, և ստացված եկամուտը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ծախսը

ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությունից, և ծախսը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Ընկերության հիմնական եկամուտը գոյանում է տրամադրված վարկերից ստացվող տոկոսներից:

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Վարկերի տրամադրման, սպասարկման և այլ վճարներից եկամուտները, գործարքի հետ կապված ծախսերի հետ միասին դիտվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որն այն դրույքն է, որը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետի ընթացքում գնահատված ապագա դրամական ներհոսքերը ճշգրիտ կերպով զեղչում է մինչև այդ ակտիվի սկզբնական ճանաչման պահի գուտ հաշվեկշռային արժեքը:

Երբ ֆինանսական ակտիվի կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի արժեքը նվազեցվել է արժեզրկումից կորստի արդյունքում, դրանից հետո տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ օգտագործելով այն տոկոսադրույքը, որը կիրառվել է՝ արժեզրկման կորուստը չափելու նպատակով ապագա դրամական միջոցների հոսքերը զեղչելու համար:

Կումիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր

Կումիսիոն վճարները, բացառությամբ վարկերի տրամադրման և սպասարկման համար գանձվող վճարների, վարձավճարները և այլ եկամտային ու ծախսային հոդվածները հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով, ծառայությունների մատուցման ընթացքում:

4.2. Արտարժույթով գործարքներ և արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ճանաչման մոտեցումը

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են (ներկայացվում են) իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Սույն հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործված արտարժույթի փոխարժեքները ներկայացված են ծանոթագրություն 25.5-ում:

4.3. Հարկեր

Շահութահարկի գծով ծախսը (եկամուտը) բաղկացած է ընթացիկ հարկի գծով ծախսից և հետաձգված հարկի գծով ծախսից (եկամտից): Շահութահարկի գծով ծախսը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն գործարքների գծով առաջացած հարկի, որոնց

արդյունքները ուղղակիորեն ճանաչվում են սեփական կապիտալում: Ընթացիկ հարկի գծով ծախսը ընթացիկ հաշվետու ժամանակաշրջանի հարկվող շահույթից վճարման ենթակա շահութահարկն է և նախորդ տարիների ընթացիկ հարկի ճշգրտումները: Հետաձգված հարկի գծով ծախսը (եկամուտը) հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների մնացորդների փոփոխությունների արդյունքն է: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այնքանով, որքանով հավանական է ապագա ժամանակաշրջաններում բավարար հարկվող շահույթի ստացումը, որի հաշվին կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները և հաջորդ ժամանակաշրջան տեղափոխվող հարկային վնասները:

ՀՀ-ում գործում են նաև բազմաթիվ այլ գործառնական հարկեր, որոնք հաշվարկվում են՝ ելնելով Ընկերության գործունեությունից: Այս հարկերը ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

4.4. Ֆինանսական գործիքների ճանաչումը և չափումը

Ընկերությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն դեպքում, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Սկզբնական ճանաչման պահին «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է իր իրական արժեքով, իսկ մնացած բոլոր ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները՝ իրական արժեքով՝ գումարած տվյալ ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները:

Սկզբնական ճանաչումից հետո այլ Ընկերությունների բաժնային գործիքներում (բաժնետոմսերում) ներդրումները, որոնք Ընկերությանը այդ Ընկերությունների նկատմամբ տալիս են նշանակալի ազդեցություն, վերահսկողություն կամ համատեղ վերահսկողություն, Ընկերության առանձին ֆինանսական հաշվետվություններում չափվում են ինքնարժեքով (սկզբնական արժեքով): Նման իրավունք (ազդեցություն) չափահավող ներդրումները բաժնային գործիքներում, ներառյալ՝ այդպիսի գործիքների հետ կապված ածանցյալները, չափվում են իրական արժեքով, բացառությամբ այն գործիքների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել: Այդպիսիք չափվում են սկզբնական արժեքով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները, տրամադրած և ստացած փոխառությունները, դեբիտորական և կրեդիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, ինչպես նաև վաճառքի համար մատչելի (ՎՀՄ) ֆինանսական ակտիվները (բացառությամբ բաժնային գործիքների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել, ինչպես նաև այդպիսի բաժնային գործիքների հետ կապված ածանցյալ գործիքներ) սկզբնական ճանաչումից հետո չափվում են իրական արժեքով: Իրական արժեքի փոփոխություններից օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ ստորև նշվածի:

ՎՀՄ ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից օգուտը կամ կորուստը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ այդ փոփոխության մեջ հեջավորված ռիսկին վերագրվող մասի, փոխարժեքային տարբերությունների, արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսի և բաժնային գործիքների գծով հայտարարված շահաբաժինների, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում: ՎՀՄ

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման կամ արժեզրկման ժամանակ, նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված և սեփական կապիտալում կուտակված օգուտները կամ կորուստները որպես վերադասակարգման ճշգրտում հանվում են սեփական կապիտալից և ճանաչվում շահույթում կամ վնասում:

4.5. Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում Ընկերությունը գնահատում է, թե արդյոք առկա է որևէ անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկված է: Եթե գոյություն ունի որևէ նման վկայություն, ապա Ընկերությունը որոշում է արժեզրկումից կորստի գումարը:

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկման անկողմնակալ վկայությունը ներառում է ակտիվի տիրապետողին հայտնի դարձած դիտարկելի տվյալները կորստի հետևյալ դեպքերի վերաբերյալ՝

ա) թողարկողի կամ փոխառուի (վարկառուի) նշանակալի ֆինանսական դժվարությունները.

բ) պայմանագրի խախտումը, օրինակ՝ տոկոսների կամ հիմնական գումարի չվճարումը կամ վճարման ուշացումը.

գ) փոխառուի ֆինանսական դժվարությունների հետ կապված տնտեսական կամ իրավական պատճառներով, փոխառուի կողմից փոխառուին զիջումների տրամադրումը, որը փոխատուն այլապես չէր նախատեսի.

դ) փոխառուի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմավորում.

ե) ֆինանսական դժվարությունների հետևանքով այդ ֆինանսական ակտիվի համար գործող շուկայի վերացումը. կամ

զ) դիտարկելի տվյալներ՝ այն մասին վկայող, որ ֆինանսական ակտիվների խմբի գծով, դրանց սկզբնական ճանաչումից հետո, առկա է գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի չափելի նվազում, թեև դեռևս հնարավոր չէ որոշել այդ նվազումը խմբի առանձին ֆինանսական ակտիվների գծով, ներառյալ՝

զ1) խմբում փոխառուների վճարումների կարգավիճակի բացասական փոփոխությունները (օրինակ՝ վճարումների ուշացումների թվի ավելացումը կամ վարկային քարտերով փոխառուների թվի ավելացումը, որոնք հասել են իրենց պարտքային սահմանաչափին և կատարում են նվազագույն ամսական վճարում). կամ

զ2) ազգային կամ տեղական տնտեսական պայմանները, որոնք կոռելիացիայի մեջ են խմբի ակտիվների գծով ձախողումների հետ (օրինակ՝ փոխառուների աշխարհագրական շրջանում գործազրկության մակարդակի աճը, համապատասխան շրջանում անշարժ գույքի գների նվազումը, նավթի գնի նվազումը նավթարտադրողներին տրամադրած փոխառության գծով ակտիվների դեպքում, կամ արդյունաբերության ճյուղի պայմանների բացասական փոփոխությունները, որոնք ազդում են խմբի փոխառուների վրա):

Ընկերության պարտքային վարկանիշի իջեցումը, որպես այդպիսին, արժեզրկման վկայություն չէ՝ չնայած այն կարող է հանդիսանալ արժեզրկման վկայություն՝ դիտարկվելով այլ առկա տեղեկատվության հետ մեկտեղ: Ֆինանսական ակտիվի իրական արժեքի նվազումը իր սկզբնական արժեքից կամ ամորտիզացված արժեքից ցածր պարտադիր չէ, որ հանդիսանա արժեզրկման վկայություն (օրինակ՝ պարտքային գործիքում ներդրման իրական արժեքի նվազումը, որն անոխակ տոկոսադրույքի աճի արդյունք է):

Արժեզրկման անկողմնակալ վկայության առկայության դեպքում արժեզրկումից կորստի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն (բացառելով ապագա պարտքային վնասները, որոնք դեռևս տեղի չեն ունեցել)՝ զեղչված ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով (այսինքն՝ սկզբնական ճանաչման ժամանակ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով): Սկզբնական արդյունավետ տոկոսադրույք չունեցող գործիքների դեպքում զեղչումն իրականացվում է համանման ֆինանսական ակտիվի համար

ընթացիկ շուկայական հատուցադրույթով: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ նվազեցնելով ակտիվի հաշվեկշռային արժեքը՝ օգտագործելով կարգավորող հաշիվ:

Եթե փոխառության, վարկի, դեբիտորական պարտքի կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրման պայմանները վերանայվում են բանակցությունների արդյունքում կամ մեկ այլ ձևով վերափոխվում են փոխառուի կամ թողարկողի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա արժեզրկումը չափվում է՝ օգտագործելով մինչև պայմանների վերափոխումը սկզբնական արդյունավետ տոկոսադրույթը: Կարճաժամկետ դեբիտորական պարտքերի հետ կապված դրամական միջոցների հոսքերը չեն գեղջվում, էթե գեղջման ազդեցությունը էական չէ:

Փոփոխական տոկոսադրույթով փոխառության, դեբիտորական պարտքի կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրման արժեզրկումից կորստի չափման նպատակով որպես գեղջման դրույթ օգտագործվում է պայմանագրի համաձայն որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույթը:

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի գծով առկա է դիտարկելի շուկայական գին, ապա այդ ակտիվի արժեզրկումից կորուստը կարող է չափվել այդ դիտարկելի շուկայական գնով որոշված իրական արժեքի հիման վրա:

Գրավով ապահովված ֆինանսական ակտիվի գծով արժեզրկումից կորուստը չափելու նպատակով հաշվի են առնվում այն դրամական միջոցների հոսքերը, որոնք կարող են առաջանալ գրավի առարկայի իրացումից՝ հանած գրավը ստանալու և վաճառելու ծախսումները՝ անկախ այն բանից, թե արդյոք հավանական է գրավի առարկայի բռնագանձումը:

Արժեզրկման հավաքական գնահատման նպատակով՝ ֆինանսական ակտիվները խմբավորվում են պարտքային ռիսկի համանման բնութագրերի հիման վրա, որոնք ցույց են տալիս փոխառուների կարողությունը վճարելու բոլոր վճարվելիք գումարները ըստ պայմանագրային պայմանների (օրինակ՝ պարտքային ռիսկի գնահատման կամ դասակարգման գործընթացի հիման վրա, որը հաշվի է առնում ակտիվի տեսակը, արդյունաբերության ճյուղը, աշխարհագրական տեղամասը, գրավի տեսակը, ժամկետանցության կարգավիճակը և այլ առնչվող գործոններ): Ընտրված բնութագրերը պետք է տեղին լինեն այդպիսի ակտիվների խմբերի գծով ապագա դրամական միջոցների հոսքերի գնահատման համար այն առումով, որ ցուցանշեն փոխառուների կարողությունը՝ վճարելու բոլոր վճարվելիք գումարները՝ ըստ պայմանագրային պայմանների: Այնուամենայնիվ, կորստի հավանականությունները և կորստին առնչվող այլ վիճակագրական ցուցանիշները խմբի մակարդակով տարբերվում են ստորև նշվածների միջև. (ա) այն ակտիվների, որոնց արժեզրկվածությունը առանձին գնահատվել է, և պարզվել է, որ արժեզրկված չեն և (բ) այն ակտիվների, որոնց արժեզրկվածությունը առանձին չի գնահատվել: Նման տարբերության արդյունքում կարող է պահանջվել արժեզրկման մեկ այլ գումար: Եթե Ընկերությունը չունի համանման ռիսկային բնութագրերով ակտիվների խումբ, ապա այն լրացուցիչ գնահատում չի իրականացնում:

Խմբային հիմունքով ճանաչված արժեզրկումից կորուստները ներկայացնում են միջանկյալ քայլ, մինչև տեղի կունենա հավաքական հիմունքով գնահատվող ֆինանսական ակտիվների խմբի առանձին ակտիվների գծով արժեզրկումից կորուստների հնարավոր բացահայտումը: Այն դեպքում, երբ հասանելի է դառնում տեղեկատվություն, որով կունկրետ որոշվում են խմբի առանձին արժեզրկված ակտիվների գծով կորուստները, այդ ակտիվները դուրս են բերվում խմբից:

Հավաքական հիմունքով արժեզրկված լինելու տեսանկյունից գնահատվող ֆինանսական ակտիվների խմբի ապագա դրամական միջոցների հոսքերը գնահատվում են խմբի ակտիվներին պարտքային ռիսկի բնութագրերով համանման ակտիվների գծով կորուստների առաջացման անցյալ փորձի հիման վրա: Անցյալ կորուստների վերաբերյալ սեփական փորձի բացակայության կամ անբավարարության դեպքում, օգտագործում են համանման Ընկերությունների ֆինանսական ակտիվների համադրելի խմբերի գծով փորձը: Կորուստների անցյալ փորձը ճշգրտվում է ընթացիկ

դիտարկելի տվյալների հիման վրա՝ արտացոլելու համար ընթացիկ այն պայմանների ազդեցությունը, որոնք չեն ազդել այն ժամանակահատվածի վրա, որի վրա հիմնված է կորուստների անցյալ փորձը, և բացառելու համար անցյալ ժամանակահատվածի այն պայմանները, որոնք ներկայումս գոյություն չունեն: Ապագա դրամական միջոցների հոսքերի փոփոխությունների գնահատականները արտացոլում են և ուղղվածությամբ հետևողական են առնչվող դիտարկելի տվյալների փոփոխություններին՝ ժամանակահատվածից ժամանակահատված (ինչպիսիք են գործազրկության մակարդակի, անշարժ գույքի գների, ապրանքների գների, վճարումների կարգավիճակի կամ այլ գործոնների փոփոխությունը, որոնք ցույց են տալիս խմբի կրած կորուստները և դրանց չափը): Ապագա դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդաբանությունը և ենթադրությունները պարբերաբար վերանայվում են՝ կորստի գնահատականների և կորստի փաստացի փորձի միջև որևէ տարբերություն նվազեցնելու համար:

4.6. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը այն և միայն այն դեպքում, երբ՝
ա) ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (լրանում է ուժի մեջ լինելու ժամկետը). կամ

բ) այն փոխանցում է ֆինանսական ակտիվը, և փոխանցումը ստորև շարադրվածին համապատասխան որակվում է որպես ապաճանաչման պայմաններին բավարարող:

Ընկերությունը փոխանցում է ֆինանսական ակտիվը այն և միայն այն դեպքում, երբ այն՝
ա) փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները. կամ

բ) պահպանում է ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները, սակայն ստանձնում է այդ դրամական միջոցների հոսքերը մեկ կամ ավելի ստացողների (վերջնական ստացողներ) վճարելու պայմանագրային պարտականություն՝ ըստ համաձայնության, որը համապատասխանում է հետևյալ երեք պայմաններին.

բ1) Ընկերությունը պարտականություն չունի գումարներ վճարելու վերջնական ստացողներին, եթե այն չի հավաքագրում համարժեք գումարներ սկզբնական ակտիվից: Ընկերության կողմից մայր գումարի և շուկայական տոկոսադրույքով հաշվեգրված տոկոսի ամբողջությամբ հետ ստանալու իրավունքով տրված կարճաժամկետ կանխավճարները չեն խախտում այս պայմանը.

բ2) փոխանցման պայմանագրի պայմաններով՝ Ընկերությանը արգելվում է վաճառել կամ գրավադրել սկզբնական ակտիվը, բացառությամբ վերջնական ստացողների մոտ գրավադրման՝ որպես դրամական միջոցների հոսքերը նրանց վճարելու պարտականության դիմաց ապահովում.

բ3) Ընկերությունը պարտականություն ունի վերջնական ստացողների անունից՝ առանց էական ուշացման փոխանցել իր կողմից հավաքած ցանկացած դրամական միջոցների հոսքեր: Ի լրումն՝ Ընկերությունն այդպիսի դրամական միջոցների հոսքերը վերաներդնելու իրավունք չունի, բացառությամբ դրամական միջոցներում և դրանց համարժեքներում ներդրումների, որոնք կատարվում են վերջնահաշվարկի այն կարճ ժամանակահատվածի ընթացքում, որն ընկնում է հավաքման ամսաթվի և վերջնական ստացողներին պահանջվող փոխանցման ամսաթվի միջև, և երբ նման ներդրումներից վաստակած տոկոսները փոխանցվում են վերջնական ստացողներին:

Ընկերությունն ապաճանաչում է փոխանցված ֆինանսական ակտիվը, եթե՝

ա) փոխանցվել են նաև ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ

բ) ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները ոչ փոխանցվել, ոչ էլ պահպանվել են, սակայն Ընկերությունը չի պահպանել ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցման ընթացքում առաջացած կամ պահպանված որևէ իրավունք և պարտականություն ճանաչվում է առանձին որպես ակտիվ կամ պարտավորություն:

<<ԳՈՒԴԿԵԴԵՒՏ>> ՈՒՎԿ ՓԲԸ

1-26 ծանոթագրությունները կազմում են 2015թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա համար

Եթե Ընկերությունը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, սակայն պահպանել է ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա այն շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը՝ դրանում իր շարունակվող ներգրավվածության չափով:

Ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում, կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է:

Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակումը հաշվի է առնվում որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության (ակտիվի) կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) հաշվառվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության (ակտիվի) մարում և նոր ֆինանսական պարտավորության (ակտիվի) ճանաչում:

Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության կամ ակտիվի (կամ ֆինանսական պարտավորության կամ ակտիվի մի մասի) հաշվեկշռային արժեքի և վճարված կամ ստացված հատուցման (ներառյալ փոխանցված ցանկացած ոչ դրամական ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

4.7. Վարձակալություն

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, երբ վարձակալության պայմաններով սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտներն փոխանցվում են վարձակալին: Մյուս բոլոր վարձակալությունները դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն:

Ֆինանսական վարձակալության ներքո պահվող ակտիվները սկզբնապես ճանաչվում են որպես Ընկերության ակտիվներ՝ վարձակալության սկզբի դրությամբ դրանց իրական արժեքով կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե վերջինս ավելի ցածր է: Վարձատուի նկատմամբ համապատասխան պարտավորությունը ներառվում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում՝ որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն:

Վարձակալական վճարները բաշխվում են ֆինանսական ծախսերի և վարձակալության գծով պարտավորության նվազեցման միջև այնպես, որ պարտավորության չմարված մնացորդի նկատմամբ ստացվի հաստատուն պարբերական տոկոսադրույք: Ֆինանսական ծախսերն անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ, երբ դրանք ուղղակիորեն վերագրելի են որակավորվող ակտիվներին, որի դեպքում դրանք կապիտալացվում են՝ փոխառության ծախսումների գծով Ընկերության ընդհանուր քաղաքականությանը համապատասխան: Պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջաններում, երբ դրանք առաջանում են:

Գործառնական վարձակալության վճարումները գծային հիմունքով ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետում, բացառությամբ, երբ մեկ այլ սիստեմատիկ հիմունք ավելի լավ է ներկայացնում վարձակալված ակտիվի սնտեսական օգուտների սպառման ժամանակային գրաֆիկը: Գործառնական վարձակալության ներքո առաջացող պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

Այն դեպքում, երբ խրախուսող պայմաններ են ստացվում գործառնական վարձակալության պայմանագիր կնքելու համար, այդ խրախուսող վճարները ճանաչվում են որպես պարտավորություն: Խրախուսող պայմաններից ամբողջ օգուտը ճանաչվում է որպես վարձակալական ծախսի նվազեցում գծային հիմունքով, բացառությամբ, երբ մեկ այլ սխտեմատիկ հիմունք ավելի լավ է ներկայացնում վարձակալված ակտիվի տնտեսական օգուտների սպառման ժամանակային գրաֆիկը:

4.8. Հիմնական միջոցների հետագա չափման մոտեցումները

Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը ճանաչվում է որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն, և միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է գնման գինը, ներառյալ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը՝ հանած առևտրային զեղչերը և արտոնությունները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսումները: Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքում ծախսումների ճանաչումը դադարեցվում է, երբ միավորը գտնվում է այն վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է, որպեսզի այն հնարավոր լինի օգտագործել ղեկավարության նախանշած նպատակներով:

Սկզբնական արժեքը ներառում է մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության որդեգրած քաղաքականության: Այս ակտիվների մաշվածությունը ևս հաշվարկվում է, երբ դրանք դառնում են պատրաստ՝ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցի միավորի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի տարբերություն: Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ վնասը ներառվում է շահույթում կամ վնասում, երբ միավորն ապաճանաչվում է:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, ճանաչվում է հաշվեկշռային արժեքում, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարվում են ճանաչման չափանիշները: Այդ փոխարինված մասերի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարվելու ժամանակաշրջանում:

Ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը հիմնական միջոցի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Որոշ դեպքերում, երբ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները կլանվում են մեկ այլ ակտիվի արտադրության ընթացքում, այդ դեպքում մաշվածության գումարը կազմում է այդ ակտիվի արժեքի մի մասը և ներառվում է դրա հաշվեկշռային արժեքում: Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն, երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ ՖՀՄՍ 5-ի համաձայն որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու կամ որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառվելու և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարի)	Դրույքաչափ (%)
Համակարգչային տեխնիկա և կապի միջոցներ	4	25
Տնտեսական և գրասենյակային գույք	1-5	20-100
Այլ հիմնական միջոցներ	1-5	20-100

4.9. Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

Այլ ոչ ընթացիկ ակտիվները վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալացվող ծախսումներն են, որոնք չեն ճանաչվել որպես առանձին հիմնական միջոց:

Այլ ոչ ընթացիկ ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումը: Դրանց հաշվառումը իրականացվում է հիմնական միջոցների հաշվառմանը համանման:

Կիրառվել են մաշվածության հետևյալ տարեկան դրույքաչափերը, որոնք սահմանվել են հաշվի առնելով վարձակալված տարածքի ակնկալվող ծառայության ժամկետը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարի)	Դրույքաչափ (%)
Վարձակալված հիմնական միջոցի վրա կատարված կապիտալացվող ծախսումներ	5-10	10-20

4.10. Ոչ նյութական ակտիվների հետագա չափման հիմունքները

Ոչ նյութական ակտիվը ճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ ակտիվին վերագրելի ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն, և ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Անորոշ օգտակար ծառայությամբ ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, դրանք չափվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

	Օգտակար ծառայության ժամկետ (տարի)	Դրույքաչափ (%)
Համակարգչային ծրագրեր	12	8
Այլ ոչ նյութական ակտիվներ /ինտերնետային կայք	12	8

4.11. Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական) որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունն էական է, ապա պահուստի գումարն իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

<<ԳՈՒԴԿՐԵԴՏ>> ՈՒՎԿ ՓԲԸ

1-26 ծանոթագրությունները կազմում են 2015թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա համար

Զեղչման դրույքն այն դրույքն է՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Զեղչման դրույքը չի արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները վերանայվում են և ճշգրտվում են՝ ընթացիկ լավագույն գնահատականն արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը հակադարձվում է: Պահուստն օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ձևաչափվել էր:

4.12. Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

- ա) աշխատավարձը,
- գ) կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսին է վճարովի տարեկան արձակուրդը,
- դ) պարգևավճարները

Աշխատակիցների հատուցումների այն գումարը, որն ակնկալվում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում աշխատակիցներից ստացված ծառայությունների դիմաց, ձևաչափվում է՝ ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո, և բ) որպես ծախս, բացառությամբ, երբ որևէ ստանդարտով պահանջվում կամ թույլատրվում է այդ հատուցումների ներառումը որևէ ակտիվի ինքնարժեքի (սկզբնական արժեքի) մեջ: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների գումարը, ապա Ընկերությունն այդ գերազանցումը ձևաչափում է որպես ակտիվ (կանխավճարված ծախս) այնքանով, որքանով այն կանխավճարը կհանգեցնի, օրինակ՝ ապագա վճարումների նվազման կամ դրամական միջոցների վերադարձի:

Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումը, կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ձևով (ինչպիսին է ամենամյա արձակուրդը) ձևաչափում է, երբ աշխատակիցները մատուցում են ծառայություն, որը ավելացնում է ապագա փոխհատուցելի բացակայությունների նրանց իրավունքը: Կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումը չափվում է այն լրացուցիչ գումարով, որն Ընկերությունն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

Ընկերությունը պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումը ձևաչափում է, երբ՝ ա) այն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և բ) պարտականությունը կարող է արժանահավատորեն գնահատվել: Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը մարման կատարումից խուսափելու որևէ իրատեսական հնարավորություն չունի:

4.13. Շահաբաժիններ

Շահաբաժինները ձևաչափվում են որպես պարտավորություն և հաշվեկշռային ամսաթվի դրությամբ նվազեցվում են կապիտալից միայն այն դեպքում, եթե դրանք հայտարարվել են մինչև հաշվեկշռի ամսաթիվը կամ այդ ամսաթվին: Շահաբաժինները բացահայտվում են, երբ դրանք առաջարկվում են մինչև հաշվեկշռային ամսաթիվը, կամ առաջարկվում կամ հայտարարվում են հաշվեկշռային ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հաստատումը հրապարակման համար:

4.14. Հաշվանցում

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը հաշվանցվում են և գուտ գումարը արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, եթե գոյություն ունի ճանաչված գումարների հաշվանցման օրենսդրորեն հաստատված իրավունք, և առկա է գուտ գումարների հիման վրա հաշվանցման կամ ակտիվի իրացման ու միաժամանակ պարտավորության մարման մտադրություն:

4.15. Հրապարակված, բայց ուժի մեջ չմտած ՖՀՄՄ-ներ

Հրապարակված, բայց մինչև Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների հաստատումն ուժի մեջ չմտած ստանդարտները ներկայացված են ստորև: Այս ցանկն այն ստանդարտների և մեկնաբանությունների ցանկն է, որն Ընկերության կանխատեսումներով կօգտագործվի իր կողմից հետագայում: Ընկերությունը պատրաստվում է ընդունել դրանք այն ժամանակ, երբ այդ ստանդարտները պարտադիր կիրառման ենթակա կլինեն:

«Ֆինանսական գործիքներ» ՖՀՄՄ 9-ը (հրապարակվել է 2009թ. նոյեմբերին) պարտադիր կիրառման ենթակա է 2015թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, սակայն վաղաժամ կիրառումը թույլատրելի է: Ստանդարտը կիրառվում է հետընթաց, սակայն 2012թ. հունվարի 1-ից առաջ սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար Ընկերությունը կարող է որոշել չվերաներկայացնել համեմատական տեղեկատվությունը: Ստանդարտը ներմուծում է ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման նոր պահանջներ, որոնք փոխարինում են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՄ 39-ում ներառված պահանջներին: Ընկերությունը ստանդարտը կիրառելու է 2015թ. հունվարի 1-ից:

«Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում» ՀՀՄՄ 32-ի փոփոխությունները ներառում են ուղեցույց ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցման համար ՀՀՄՄ 32-ի չափանիշների կիրառման ընթացքում անհամապատասխանությունների վերաբերյալ հետևյալ երկու բնագավառներում.

□ «Տվյալ պահին ունի հաշվանցման իրավաբանորեն ամրագրված իրավունք» դրույթի իմաստը. Փոփոխությունները պարզաբանում են, որ հաշվանցման իրավունքը պետք է իրավաբանորեն ամրագրված լինի Ընկերության բնականոն գործունեության ընթացքում, Ընկերության և բոլոր մնացած կողմերի անվճարունակության և սնանկացման դեպքում, և այդ իրավունքը պետք է առկա լինի բոլոր կողմերի համար:

□ Քանի որ գործնականում ՀՀՄՄ 32-ում առկա «միաժամանակյա մարման» մեկնաբանության գործնական կիրառման մեջ առկա էր բազմազանություն, ուստի ՀՀՄՄ-ն պարզաբանեց գուտ մարման սկզբունքը և ներառեց համախառն մարման համակարգի օրինակ՝ ՀՀՄՄ 32-ի գուտ մարման չափանիշին բավարարող բնութագրիչներով:

Փոփոխությունները ուժի մեջ է մտել 2014թ հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և ենթակա է հետընթաց կիրառման:

5. Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՄ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ծախսերի և եկամուտների վրա: Պատմական փորձի և տվյալ պայմաններում հիմնավորված այլ գործոնների վրա հիմնված գնահատումներն ու դրանց հետ կապված ենթադրությունները հնարավորություն են տալիս դատողություններ անել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք հնարավոր չէ որոշել այլ աղբյուրներից: Բոլոր դեպքերում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների

լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Գնահատումներն ու դրանց հիմքում ընկած ենթադրությունները շարունակական հիմունքով վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումների արդյունքները ճանաչվում են վերանայման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, որոնց վրա ազդում են:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

5.1. Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական գներով: Գործող շուկայի բացակայության դեպքում շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքների կիրառումը որոշվում է դատողությունների հիման վրա: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

Ընկերության կողմից կապակցված կողմերի հետ կնքված գործարքների գծով տեղեկատվությունը ներկայացված է 24-րդ ծանոթագրությունում:

5.2. Վարկերի և դեբիտորական պարքերի գծով արժեզրկման պահուստներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Ընկերությունը վերանայում է իր խնդրահարույց վարկերն ու փոխատվությունները՝ որոշելու համար, թե արդյոք արժեզրկման պահուստ պետք է նախատեսվի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է որոշել պահուստի չափը: Նման գնահատումները հիմնված են մի շարք գործոնների վերաբերյալ ենթադրությունների վրա, և իրական արժեքները կարող են տարբերվել, որը կհանգեցնի պահուստի գումարի հետագա փոփոխությունների: Նշանակալի վարկերի և փոխատվությունների համար ստեղծված հատուկ պահուստից բացի, Ընկերությունը ստեղծում է նաև արժեզրկման խմբային պահուստներ այն ռիսկի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Հաշվի են առնվում այնպիսի գործոններ, ինչպիսիք են ռիսկային ցուցանիշների վատթարացումը արդյունաբերության մեջ, տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թուլությունները կամ դրամական հոսքերի նվազումը:

6. Զուտ տոկոսային եկամուտներ (ծախսեր)

	Հազ.դրամ	
	31/12/2015թ.	31/12/2014թ.
Տոկոսային եկամուտներ վարկերից	268,600	189,129
Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից	158	299
Ընդամենը տոկոսային եկամուտներ	268,758	189,428
Տոկոսային ծախսեր ֆինանսական կազմակերպություններից ներգրավված վարկերի և փոխառությունների գծով	28,057	4,203
Այլ կազմակերպություններից ներգրավված փոխառությունների գծով	34,009	7,664
Ընդամենը տոկոսային ծախսեր	62,066	11,867
Զուտ տոկոսային եկամուտներ (ծախսեր)	206,692	177,561

7. Զուտ կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ (ծախսեր)

	<u>Հազ.դրամ</u>	
	31/12/2015թ.	31/12/2014թ.
Ապահովագրական գործակալությունից միջնորդավճարներ	1,659	690
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	1,659	690
Բանկային ծառայություններ	1,353	4
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	1,353	4
Զուտ կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ (ծախսեր)	306	686

8. Այլ եկամուտներ

	<u>Հազ.դրամ</u>	
	31/12/2015թ.	31/12/2014թ.
Տույժերից և տուգանքներից եկամուտներ	25,260	22,083
Այլ եկամուտներ	1,740	374
Ընդամենը այլ եկամուտներ	27,000	22,457

9. Անձնակազմի գծով ծախսեր

	<u>Հազ.դրամ</u>	
	31/12/2015թ.	31/12/2014թ.
Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	165,911	97,007
Անձնակազմի վերապատրաստման գծով ծախսեր	206	109
Անձնակազմի գծով այլ ծախսեր	4,205	
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	170,322	97,716

Աշխատավարձից հարկային և այլ պահումները կազմել են`

	31/12/2015թ.	31/12/2014թ.
Հարկերի գծով	43,891	24,570
Այլ պարտադիր վճարների գծով	677	2,261
Ընդամենը հարկային և այլ պահումներ	44,568	26,831

10. Այլ ծախսեր

	<u>Հազ.դրամ</u>	
	31/12/2015թ.	31/12/2014թ.
Ոչ նյութական ակտիվների սպասարկման ծախսեր	16,614	3,788
Գովազդային ծախսեր	32,959	350
Գործուղման ծախսեր	7,727	2,564
Հասարակական կապերի գծով ծախսեր	270	250
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	6,376	3,918
Վարձակալության գծով ծախսեր	18,934	12,658
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	1,311	1,038
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	19,322	8,859
Ներկայացուցչական ծախսեր	4,241	949
Գրասենյակային ծախսեր	9,064	3,351
Անդամավճարներ	1,556	1,417
Ապահովագրության գծով ծախսեր	1,452	629
Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր	20,075	5,045
Ֆինանսական հաշտարարի գրասենյակին վճարումների գծով ծախսեր	363	416
Վաճառքի համար պահվող ակտիվների արժեզրկումից կորուստներ	-	3,788
Այլ ծախսեր	4,184	1,379
Ընդամենը այլ ծախսեր	144,448	50,399

11. Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)

	<u>Հազ.դրամ</u>	
	31/12/2015թ.	31/12/2014թ.
Ընթացիկ ժամանակաշրջանի հարկի գծով ծախս	-	-

Ընթացիկ ժամանակաշրջանի հարկի գծով ծախս

<<ԳՈՒԴԿԻՆԵԴՆՏ>> ՈՒՎԿ ՓԲԸ

1-26 ծանոթագրությունները կազմում են 2015թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա համար

Հետաձգված հարկի գծով (ծախս) փոխհատուցում	26,087	(5,854)
Ընդամենը շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում	26,087	(5,854)

ՀՀ-ում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2014թ.՝ 20%): ՀՀ Հարկային օրենսդրության և ՖՀՄՄ-ի միջև եղած մի շարք տարբերությունը առաջացնում է ժամանակավոր տարբերություններ մի շարք ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների միջև՝ ֆինանսական հաշվետվության և շահութահարկի հաշվարկման առումով:

Ստորև ներկայացվում է ընթացիկ հարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև թվային փոխկապակցվածությունը:

	31/12/2015թ.	Արդյունավետ դրույքաչափ (%)	31/12/2014թ.	Հազ.դրամ Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթը /(վնասը) մինչև հարկումը	(139,685)		18,274	
Շահութահարկ կիրառելի հարկային դրույքաչափով	27,937	(20%)	(3,655)	(20%)
Չնվազեցվող ծախսեր (չհարկվող եկամուտ)	(1,495)	1%	(1,127)	(6%)
Դրական (Բացասական) փոխարժեքային տարբերություն	(355)	(0%)	(1,072)	(6%)
Ընդամենը ընթացիկ շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում	26,087	(19%)	(5,854)	(32%)

12. Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ, փոփոխություններ ժամանակավոր տարբերություններում հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:

	31/12/2014թ.	ՖԱՄՀ ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	Հազ.դրամ 31/12/2015թ.
Այլ պարտավորություններ և պահուստներ	1,909	2,508	-	4,417
Հիմնական միջոցներ	165	(2,116)	-	(1,951)
Կուտակված հարկային վնաս	850	20,425	-	21,275
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	2,924	20,817	-	23,741
Ներգրավված վարկեր և փոխառություններ	(5,407)	48	5,234	(125)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	(545)	115		(430)
Պահանջներ ֆինանսական և այլ կազմակերպությունների նկատմամբ, այլ ակտիվներ	(31)	(127)	-	(158)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	(5,983)	36	5,234	(713)
Զուտ հետաձգված հարկային ակտիվ (պարտավորություն)	(3,059)	20,853	5,234	23,028

	31/12/2013թ.	ՖԱՄՀ ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	Հազ.դրամ 31/12/2014թ.
Այլ պարտավորություններ և պահուստներ	1,427	482	-	1,909
Հիմնական միջոցներ	102	63	-	165
Կուտակված հարկային վնաս	6,472	(5,622)	-	850
Ընդամենը հետաձգված հարկային	8,001	(5,077)	-	2,924

<<ԳՈՒԴԿԵՆԴԻՏ>> ՈՒՎԿ ՓԲԸ

1-26 ծանոթագրությունները կազմում են 2015թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա համար

ակտիվներ

Ներգրավված վարկեր և փոխառություններ	(5,271)	(136)	-	(5,407)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	93	(638)	-	(545)
Պահանջներ Ֆինանսական և այլ կազմակերպությունների նկատմամբ, այլ ակտիվներ	(28)	(3)	-	(31)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	(5,206)	(777)	-	(5,983)
Զուտ հետաձգված հարկային ակտիվ (պարտավորություն)	2,795	(5,854)	-	(3,059)

13. Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ

	31/12/2015թ.	Հազ.դրամ 31/12/2014թ.
Կանխիկ դրամ դրամարկղում	105	795
Ընթացիկ հաշիվներ բանկերում	70,280	5,129
Ընդամենը դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	70,385	5,924

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

2015թ.-ի դեկտեմբերի 30-ի դրությամբ և 2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի բանկերում պահվող այնպիսի միջոցներ, որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը:

14. Հաճախորդներին տրված վարկեր եւ փոխատվություններ

	31/12/2015թ.	Հազ.դրամ 31/12/2014թ.
Հաճախորդներին տրված վարկերի մայր գումարի մնացորդ	892,602	490,617
Հաճախորդներին տրված վարկերի գծով հաշվեզրկված տոկոսներ	14,773	7,796
Վարկերի արժեզրկման պահուստ	(20,238)	(14,050)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	887,137	484,363

2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 63.26% (2014թ.-ի դեկտեմբերի 31՝ 48.83%) ՀՀ դրամով վարկերի համար վարկերի համար:

Վարկերի և փոխատվությունների **գծով արժեզրկման պահուստն ըստ դասերի ունի հետևյալ տեսքը**

	Մասնավոր ձեռնարկություններ	Ֆիզիկական անձինք	Անհատ ձեռնարկատերեր	Հազ.դրամ Ընդամենը
Առ 31/12/2014թ.	1,654	2,617	9,779	14,050
Վարկային կորուստների արժեզրկման ծախս / (հակադարձում)	(1,945)	22,667	18,321	39,043
Վարկային կորուստների արժեզրկման (ծախս) / հակադարձում վարկի դուրս գրում/ վերականգնումից	(294)	(855)	(806)	(1,955)
Դուրս գրում	(1,423)	(20,391)	(25,820)	(47,634)
Վերադարձ	2,291	7,839	6,604	16,734
Առ 31/12/2015թ.	283	11,877	8,078	20,238
Անհատական արժեզրկում	109	6,047	5,607	11,763
Խմբային արժեզրկում	174	5,830	2,471	8,475

Ընդամենը արժեզրկում	283	11,877	8,078	20,238
				<u>Հազ.դրամ</u>
	Մասնավոր ձեռնարկություններ	Ֆիզիկական անձինք	Անհատ ձեռնարկատերեր	Ընդամենը
Առ 31/12/2013թ.	1,122	2,670	7,992	11,784
Վարկային կորուստների արժեզրկման (ծախս) / հակադարձում	904	10,672	11,128	22,704
Դուրս գրում	(2,070)	(9,913)	(17,624)	(29,607)
Վերադարձ	491	1,128	7,550	9,169
Առ 31/12/2014թ.	447	4,557	9,046	14,050
Անհատական արժեզրկում	323	2,831	6,405	9,559
Խմբային արժեզրկում	124	1,726	2,641	4,491
Ընդամենը արժեզրկում	447	4,557	9,046	14,050

Դեբիտորական պարտքերի գծով արժեզրկման պահուստն ըստ դասերի ունի հետևյալ տեսքը

				<u>Հազ.դրամ</u>
	Մասնավոր ձեռնարկություններ	Ֆիզիկական անձինք	Անհատ ձեռնարկատերեր	Ընդամենը
Առ 31/12/2014թ.	-	-	63	63
Դեբիտորական պարտքերի արժեզրկման (ծախս) / հակադարձում	1	496	1,069	1,566
Դուրս գրում	(65)	(832)	(1,646)	(2,543)
Վերադարձ	65	340	514	919
Առ 31/12/2015թ.	1	4	0	5
Անհատական արժեզրկում	1	496	1,069	1,566
Խմբային արժեզրկում	-	-	-	-
Ընդամենը արժեզրկում	1	496	1,069	1,566

Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունը՝ ըստ հաճախորդների

		<u>Հազ.դրամ</u>
		31/12/2015թ.
		31/12/2014թ.
Մասնավոր ձեռնարկություններ	17,826	17,754
Ֆիզիկական անձինք	619,253	186,317
Անհատ ձեռնարկատերեր	270,296	294,342
Համախառն հաշվեկշռային արժեք	907,375	498,413
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	(20,238)	(14,050)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	887,137	484,363

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերն ունեն հետևյալ տեսքը

		<u>Հազ.դրամ</u>
		31/12/2015թ.
		31/12/2014թ.
Սպառողական վարկ	619,253	186,317
Գյուղատնտեսական վարկեր	-	-
Ընդամենը ֆիզիկական անձանց տրված վարկեր և փոխատվություններ	619,253	186,317

Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ դասերի ունի հետևյալ տեսքը՝

		<u>Հազ.դրամ</u>
		31/12/2015թ.
		31/12/2014թ.
Տնտեսության ճյուղ		

Արդյունաբերություն	33,838	18,584
Տրանսպորտ և կապ	12,872	8,182
Առողջապահություն	85	1,048
Առևտուր	211,779	253,529
Սպառողական	619,253	186,317
Այլ	29,548	30,753
Ընդամենը	756,103	498,413
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխառվածությունների գծով	(20,238)	(14,050)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխառվածություններ	887,137	484,363

15. Հիմնական միջոցներ

	Գույք և գրասենյակային սարքավորումներ	Համակարգչային տեխնիկա	Կապիտալացված վերանորոգման ծախսեր	Այլ հիմնական միջոցներ	Հազ.դրամ
					Ընդամենը
Մնացորդ առ. 31/12/2014թ.	15,524	8,953	6,470	2,040	32,987
Չեղբերում	12,520	46,267	-	369	59,156
Օտարում/դուրս գրում	-	-	-	-	-
Վերադասակարգում	-	-	-	-	-
Արժեզրկում	-	-	-	-	-
Մնացորդ առ. 31/12/2015թ.	28,044	55,220	6,470	2,409	92,143

Մաշվածություն	Գույք և գրասենյակային սարքավորումներ	Համակարգչային տեխնիկա	Կապիտալացված վերանորոգման ծախսեր	Այլ հիմնական միջոցներ	Հազ.դրամ
					Ընդամենը
Մնացորդ առ. 31/12/2014թ.	11,449	6,817	1,672	837	20,775
Ժամանակաշրջանի մաշվածություն	2,810	4,514	647	65	8,036
Կուտակված մաշվ. դուրս գրում	-	-	-	-	-
Վերադասակարգում	-	-	-	-	-
Արժեզրկում	-	-	-	-	-
Մնացորդ առ. 31/12/2015թ.	14,259	11,331	2,319	902	28,811

Հաշվեկշռային արժեք	Գույք և գրասենյակային սարքավորումներ	Համակարգչային տեխնիկա	Այլ հիմնական միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Հազ.դրամ
					Ընդամենը
Մնացորդ առ. 31/12/2014թ.	4,075	2,136	4,798	1,203	12,211
Մնացորդ առ. 31/12/2015թ.	13,785	43,889	4,151	1,507	63,332

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 6,839 հազար ՀՀ դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,106 հազար ՀՀ դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ կերպով սահմանափակման ենթակա հիմնական միջոցների:

16. Ոչ նյութական ակտիվներ

Հազ.դրամ

<<ԳՈՒԴԿՐԵԴՆ>> ՈՒՎԿ ՓԲԸ

1-26 ծանոթագրությունները կազմում են 2015թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա համար

Արժեք	Համակարգչային ծրագրեր	Բնութենետային կայք	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Մնացորդ առ. 31/12/2014թ.	5,100	1,165	0	6,265
Ձեռքբերում	-	7,820	3,234	11,054
Օտարում	-	-	-	-
Մնացորդ առ. 31/12/2015թ.	5,100	8,985	3,234	17,319
				Հազ.դրամ
Մաշվածություն	Համակարգչային ծրագրեր	Բնութենետային կայք	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Մնացորդ առ. 31/12/2014թ.	2,626	238	-	2,864
Ժամանակաշրջանի մաշվածություն	448	297	21	766
Մնացորդ առ. 31/12/2015թ.	3,074	535	21	3,630
				Հազ.դրամ
Հաշվեկշռային արժեք	Համակարգչային ծրագրեր	Բնութենետային կայք	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Մնացորդ առ. 31/12/2014թ.	2,474	927	-	3,401
Մնացորդ առ. 31/12/2015թ.	2,026	8,450	3,213	13,689

Ոչ նյութական ակտիվների սահմանափակումներ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ կերպով սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվների:

Հազ.դրամ

17. Այլ ակտիվներ

	Հազ.դրամ	
	31/12/2015թ.	31/12/2014թ.
Դեբիտորական պարտքեր	1,999	4,010
Դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստ	(5)	(63)
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	1,994	3,946
Կանխավճարներ	342	165
Չամորտիզացված ապահովագրավճարներ	805	213
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր	1,417	765
Այլ ակտիվներ	935	1,004
Ընդամենը այլ ակտիվներ	5,493	6,094

18. Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	Հազ.դրամ	
	31/12/2015թ.	31/12/2014թ.
Վարկեր բանկերից	-	38,157
Վարկեր այլ ֆինանսական կազմակերպություններից	657,274	-
Ընդամենը հաշվեգրված տոկոսներ	34,382	258
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	691,656	38,415

2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ԱՄՆ դոլարով պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 14.18% (2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 11.17%):

19. Փոխառություններ

	Հազ.դրամ	
	31/12/2015թ.	31/12/2014թ.
Ընկերության բաժնետիրոջից ներգրավված փոխառություններ	-	23,996

<<ԳՈՒԴԿԵԴԵՏ>> ՈՒՎԿ ՓԲԸ

1-26 ծանոթագրությունները կազմում են 2015թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա համար

Հայկական ոչ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված փոխառություններ
 Ընդամենը հաշվեգրված տոկոսներ
Ընդամենը փոխառություններ

-	-
-	1,722
-	25,718

20. Այլ պարտավորություններ

	31/12/2015թ.	Հազ.դրամ 31/12/2014թ.
Արտաքին կրեդիտորական պարտքեր	22,541	2,893
Պարտավորություններ անձնակազմի նկատմամբ	630	149
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	23,171	3,042
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	9,315	1,777
Չօգտագործված արձակուրդի պահուստ	22,084	9,546
Ընդամենը այլ պարտավորություններ	54,570	14,365

21. Լրացուցիչ կապիտալ

Փոխառությունը ներգրավված է Ընկերության մայր կազմակերպությունից շուկայականից ցածր տոկոսադրույքով: Բաժնետիրոջ կողմից տրամադրված փոխառության իրական և անվանական արժեքների տարբերությունը ճանաչվել է կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ:

22. Կանոնադրական կապիտալ

2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված կանոնադրական կապիտալը կազմում է 420,000 հազար ՀՀ դրամ, որը բաժանված է թվով 210 սովորական անվանական բաժնետոմսերի՝ 2,000 հազ. ՀՀ դրամ անվանական արժեքով:

2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Գլխավոր պահուստը ստեղծվել է համաձայն Ընկերության կանոնադրության, որը նախատեսում է տարեկան զուտ շահույթի առնվազն 5%-ի չափով պահուստին հատկացում, քանի դեռ Ընկերության գլխավոր պահուստի մեծությունը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 15%-ից փոքր մեծություն:

23. Պայմանական դեպքեր

23.1. Ապահովագրություն

Ապահովագրությունը ՀՀ-ում համեմատաբար նոր ոլորտ է՝ գտնվում է զարգացման փուլում, և ապահովագրության շատ ձևեր դեռ հասանելի չեն տեղական կազմակերպություններին: Ընկերությունը ամբողջովին ապահովագրված չէ իր գործունեության ընդհատման կամ էական կրճատման, երրորդ անձանց հանդեպ հնարավոր պարտավորությունների գծով, որոնք կարող են առաջանալ գույքային, բնապահպանական կամ առողջական վնասների հնարավոր միջադեպերի արդյունքում: Ընկերությունը ձեռք է բերել բանկային ռիսկերի համալիր ապահովագրություն, որով ապահովագրվում են հետևյալ ռիսկերը՝ ա) ազնվության, գողության, կողոպուտի, յուրացման, վատնման, խարդախության, այդ թվում՝ կեղծ փողեր, արժեթղթեր և վճարային փաստաթղթեր իրացնելու կամ կեղծ պայմանագրեր ներկայացնելու հետևանքով ընկերության գույքի հափշտակման ռիսկը բ) Ընկերության գույքի կորստի կամ վնասվածքի ռիսկը, այդ թվում՝ Ընկերության տարածքում գտնվող կամ փոխադրվող կանխիկ դրամի, արժեթղթերի, վճարային փաստաթղթերի և այլ արժեքավոր գույքի կորստի կամ վնասվածքի ռիսկը: Վերոնշյալ ռիսկերը ապահովագրված են մինչև 7 մլն. դրամ գումարի չափով: Սակայն քանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների

կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

23.2. Հարկային անորոշություններ

Հարկային համակարգը ՀՀ-ում նույնպես համեմատաբար նոր է և աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, պաշտոնական պարզաբանումներով, որոնք երբեմն անհստակ են, հակասական կամ տարրնթերցումների տեղիք տվող: Հարկային մարմինները կարող են ստուգել Ընկերության հարկային հաշվարկները ու հայտարարագրերը և իրավունք ունեն սույժ-տուգանքներ նշանակելու: Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության, հարկային հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերի՝ իր մեկնաբանությունների վրա:

Դատական գործեր

Ընկերությունը 2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներգրավված է ութսունվեց դատական գործում/որոշների գծով կան ի օգուտ Ընկերության վճիռներ/, որոնցից ութսունհինգում հանդիսանում է հայցվոր, մեկում՝ պատասխանող:

- **Ընկերության դեմ ներկայացված դատական գործեր:** Ընկերության հանդեպ ներկայացված է հայցերից մեկը Ընկերության կողմից նախկինում բռնագրավված գույքի օտարման գործարքի նկատմամբ առաջինը գործարքի հետևանքներ կիրառելու մասին է: Ընկերության ղեկավարության գնահատմամբ նշված դատական հայցի բավարարման հավանականությունը շատ փոքր է, քանի որ Ընկերությունը գործել է համաձայն ՀՀ օրենսդրության: Դեկտեմբերի 29-ին դատարանի վճռով մերժվել է հայցադիմումը: Հայցվորը 27.07.2015 թ.-ին վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանին: Վերաքննիչը վճիռը բեկանել է և գործը ուղարկել է առաջի աստիճանի դատարան քննության:
- **Ընկերության կողմից վարկառուների նկատմամբ ներկայացված դատական գործեր:** Ընկերությունը հայց է ներկայացրել դատարան իր հաճախորդ վարկառուներից 86-ի նկատմամբ՝ վարկի գումարի ամբողջական բռնագանձման պահանջով: Ընկերության ղեկավարության գնահատմամբ Ընկերության կողմից ներկայացված հայցերի բավարարումը մեծ հավանականություն ունի: Չի բացառվում նաև Ընկերության և նրա վարկառուների միջև հաշտության համաձայնագրի կնքումը: Նշված դատական գործերի գծով առկա պահանջների համախառն հաշվեկշռային արժեքը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 56,908 հազ. ՀՀ դրամ: Վարկի գծով արժեզրկման պահուստին հատկացումը կազմել է 2,650 հազ. ՀՀ դրամ, Ընդ որում նշված վարկերից 76-ը՝ 49,984 ՀՀ դրամը դասակարգված են որպես անհուսալի վարկ:
- **Ընկերության կողմից դեբիտորների նկատմամբ ներկայացված դատական գործեր:** Ընկերությունը հայց է ներկայացրել դատարան իր հանդեպ դեբիտորական պարտք ունեցող ընկերության հանդեպ, որը գտնվում է սնանկության գործընթացում: Դատական գործի գծով առկա պահանջը կազմում է 2,257 հազ. ՀՀ դրամ: Դատարանի որոշմամբ բավարարվել է Ընկերության հայցը, և Ընկերությունը հայտվել է պարտատերերի ցանկում, սակայն նշված դեբիտորական պարտքը ամբողջությամբ արժեզրկվել է, քանի որ Ընկերության ղեկավարության կարծիքով վերոնշյալ դեբիտորական պարտքի մարումն հավանականությունը շատ փոքր է:

23.3. Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով

Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունը իր գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է գործառնական վարձակալության պայմանագրեր իր գրասենյակի և մասնաճյուղերի համար:

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը ունի հետևյալ տեսքը:

	<u>Հազ.դրամ</u>	
	<u>31/12/2015թ.</u>	<u>31/12/2014թ.</u>
Մինչև 1 տարի	16,336	7,993
1-5 տարի		
Ընդամենը գործառնական վարձակալության պարտավորություն	16,336	7,993

23.4. Կապիտալ բնույթի պարտավորություններ

Ընկերությունը չունի կապիտալ բնույթի պարտավորություններ:

24. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա մասնակիցները, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, փոխառությունները, վարձակալությունները և այլն: Կապակցված կողմերի հետ բոլոր գործարքներն իրականացվել են շուկայական պայմաններով:

Գործարքների ծավալները, անվանական մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ և հաշվետու ժամանակաշրջանի եկամուտները և ծախսերը հետևյալն են.

	<u>31/12/2015թ.</u>		<u>Հազ.դրամ</u> <u>31/12/2014թ.</u>	
	<u>Բաժնետերեր և փոխկապակցված անձինք</u>	<u>Ղեկավար անձնակազմ և փոխկապակցված անձինք</u>	<u>Բաժնետերեր և փոխկապակցված անձինք</u>	<u>Ղեկավար անձնակազմ և փոխկապակցված անձինք</u>
1) Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ				
Վարկի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ, համախառն	-	700¹	-	1,440²
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	-	2,000	-	22,300
Տարվա ընթացքում մարված վարկեր	-	(2,452)	-	(17,281)
Վարկի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ	-	248	-	6,459
Արժեզրկման պահուստ	-	(2)	-	(64)

¹ Հաշվետու ժամանակաշրջանի սկզբնական արժեքի մեջ ներառված չէ 5,759 ՀՀ դրամի ղեկավար անձնակազմի և փոխկապակցված անձանց տրամադրված վարկեր և փոխատվություններ, քանի որ հաշվետու ժամանակաշրջանում տեղի է ունեցել ղեկավար անձի փոփոխություն

² Հաշվետու ժամանակաշրջանի սկզբնական արժեքի մեջ ներառված չէ 1,469 ՀՀ դրամի ղեկավար անձնակազմի և փոխկապակցված անձանց տրամադրված վարկեր և փոխատվություններ, քանի որ հաշվետու ժամանակաշրջանում տեղի է ունեցել ղեկավար անձի փոփոխություն:

Հաշվեգրված տոկոսների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ	-	-	-	41
Ձուտ մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	-	246	-	6,502
Հաշվետու ժամանակաշրջանում հաշվեգրված տոկոսային և այլ եկամուտներ	-	199	-	2,113
2) Փոխառություններ				
Փոխառություններ հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	- ³		41,756	
Փոխառության ստացում	657,900		30,000	
Փոխառության մարում	0		(20,756)	
Փոխառությունների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ	657,900		51,000	
Հաշվեգրված տոկոսների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ	34,382		1,722	
Ձուտ մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	692,282		52,722	
Հաշվետու ժամանակաշրջանում հաշվեգրված տոկոսային ծախսեր	33,409		3,588	
3) Այլ ձեռքբերումների գծով				
Պարտավորության (կանխավճարի) մնացորդը ժամանակաշրջանի սկզբին, այդ թվում	- ⁴		5,165	-
Վարձակալության գծով		-	370	-
ՀՄ ձեռքբերումների գծով /այդ թվում կապիտալացվող վերանորոգման ծախսերի գծով		-	2,042	-
Այլ ծառայությունների գծով		-	2,753	-
Ձեռքբերումներ, այդ թվում		-	3,137	-
Վարձակալության գծով		-	1,950	-
ՀՄ ձեռքբերումների գծով /այդ թվում կապիտալացվող վերանորոգման ծախսերի գծով	4,370	-	-	-
Այլ ծառայությունների գծով	14,521	-	1,187	-
Վճարումներ, այդ թվում		-	(7,046)	-
Վարձակալության գծով		-	(2,290)	-
ՀՄ ձեռքբերումների գծով /այդ թվում կապիտալացվող վերանորոգման ծախսերի գծով	(4,370)	-	(2,042)	-
Այլ ծառայությունների գծով		-	(2,714)	-
Պարտավորության (կանխավճարի) մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին, այդ թվում	14,521	-	1,256	-
Վարձակալության գծով		-	30	-
ՀՄ ձեռքբերումների գծով /այդ թվում կապիտալացվող վերանորոգման ծախսերի գծով		-	-	-
Այլ ծառայությունների գծով	14,521	-	1,226	-

Ղեկավար անձնակազմի գծով փոխհատուցումները ներկայացված են ստորև

	Հազ.դրամ	
	31/12/2015թ.	31/12/2014թ.
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ վճարումներ	86,882	43,014
Սոցիալական ապահովության գծով ծախսեր	-	-
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով փոխհատուցումները	60,090	43,014

³ Հաշվետու ժամանակաշրջանի սկզբնական արժեքի մեջ ներառված չէ 51,000 ՀՀ դրամի փոխկապակցված անձանցից ստացված փոխառություններ, քանի որ հաշվետու ժամանակաշրջանում տեղի է ունեցել փոխկապակցված անձի փոփոխություն

⁴ Հաշվետու ժամանակաշրջանի սկզբնական արժեքի մեջ ներառված չէ 1,256 ՀՀ դրամի պարտավորությունների գումարը, քանի որ հաշվետու ժամանակաշրջանում տեղի է ունեցել փոխկապակցված անձի փոփոխություն

25. Ֆինանսական գործիքներ և ռիսկերի կառավարում

25.1. Ընդհանուր ակնարկ

Ընկերության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանությունը, և այդ գործունեությունը ներառում է ռիսկի կամ ռիսկերի համախմբության որոշակի մակարդակի վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անխուսափելի հետևանքն է: Այդուհանդերձ, Ընկերության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Ընկերության ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունը: Շուկայական ռիսկը, պարտքային ռիսկն և իրացվելիության ռիսկն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Ընկերությունը:

25.2. Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակը և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող տոկոսադրույքների ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով: Ընկերությունում ռիսկերի կառավարումը իրականացնում է Ընկերության ղեկավար անձնակազմը: Ղեկավարությունը գնահատում է ֆինանսական ռիսկերը՝ սերտորեն համագործակցելով Ընկերության գործառնական միավորների հետ, դրանց մեղմացմանն ուղղված գործառնություններն իրականացնելու նպատակով:

25.3. Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Ընկերության նկատմամբ: Ընկերությունը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր պարտքային ռիսկը կառավարելու համար: Ընկերությունում կարևորագույն խնդիր է վարկերի չվերադարձման ռիսկը կառավարելը: Այդ նպատակով Ընկերության ղեկավարության կողմից մշակվել և հաստատվել է վարկային քաղաքականություն, որը սահմանում է վարկային դիմումների դիտարկման և հաստատման ընթացակարգերը, պայմանագրային կողմերի վճարունակության, գրավի գնահատման մեթոդաբանությունը, վարկային փաստաթղթերի պահանջները, վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական վերահսկման ընթացակարգերը:

Ընկերությունը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և վարկառուի կողմից տրամադրված կամ Ընկերության կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Գրավի ներկա շուկայական արժեքը կանոնավոր կերպով գնահատվում է կանոնակալ գնահատողի, կանոնակալ Ընկերության մասնագետների կողմից:

Ընկերությունը ղեկավարում, սահմանափակում և վերահսկում է ցանկացած բացահայտված պարտքային ռիսկի կենտրոնացումները՝ մասնավորապես, մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև տնտեսական ճյուղերի և աշխարհագրական սեգմենտների կտրվածքով:

25.3.1. Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

2014թ.-ին և 2015թ.-ի հունվար ամսից մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջը Ընկերության պարտքային ռիսկերն ամբողջությամբ կենտրոնացված են եղել ՀՀ-ում:

Գործունեության ոլորտներ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս 2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պարտքային ռիսկի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ գործունեության ոլորտների:

	Ֆինանսական կազմակերպություններ	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Տրանսպորտ և կապ	Առողջապահություն	Առևտուր	Սպառողական վարկեր	Այլ	Հազ.դրամ 70
Կանխիկ դրամական միջոցներ և դրան հավասարեցված միջոցներ	70,385	-	-	-	-	-	-	-	70,385
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	33,312	-	12,384	43	205,781	607,391	28,228	887,137
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	70,385	33,312	-	12,384	43	205,781	607,391	28,228	957,522
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,924	18,005	-	8,077	1,038	245,449	181,759	30,036	490,286

25.3.2. Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Ընկերությունը կարգավորում է պարտքային ռիսկի մակարդակները՝ մեկ վարկառուի կամ վարկատուների խմբի գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր սահմանելով:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով: Մեկ վարկառուի գծով պարտքային ռիսկը զսպելու նպատակով սահմանվում են վարկի տրամադրման առավելագույն սահմանաչափեր:

Պարտքային ռիսկը նաև կառավարվում է վարկառուների և պոտենցիալ վարկառուների՝ մայր գումարի և տոկոսների վճարման կարողությունը պարբերաբար վերլուծելով և անհրաժեշտության դեպքում վարկի տրամադրման սահմանաչափերը փոխելով:

Պարտքային ռիսկի կենտրոնացումներ

2015թ.-ի դեկտեմբերի 31-ի և 2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի վարկառուներ կամ կապակցված վարկառուների խմբեր, որոնց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը:

Ստորև ներկայացված են հատուկ հսկողության և զսպողական մի քանի այլ միջոցներ:

Գրավ և երաշխավորություն

Ընկերությունը կիրառում է բազմաթիվ միջոցներ պարտքային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը: Ընկերությունը կանոններ է սահմանում գրավի հատուկ տեսակների ընդունելի լինելու կամ ռիսկերի զսպման վերաբերյալ: Վարկերի և փոխատվությունների համար ապահովման հիմնական տեսակներն են.

Հիփոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույքը

- Ընկերությունների գործառնական ակտիվները՝ շենքերը, պաշարները և այլ հիմնական միջոցները
- Ֆիզիկական անձանց շարժական գույքը
- Երաշխավորությունները

Ստորև ներկայացվում է վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

	31/12/2015թ.	31/12/2014թ.
Անշարժ գույք	33,851	4,226
Շարժական գույք	29,285	3,991
Շրջանառության մեջ գտնվող ակտիվներ	89,891	215
Սարքավորումներ	23,882	10,730
Երաշխիքներ և երաշխավորություններ	700,123	396,805
Առանց գրավ	30,343	19,758
Այլ գրավ	-	62,688
Հանած վարկերի արժեզրկման պահուստը	(20,238)	(14,050)
Ընդամենը վարկեր և փոխառվածություններ	887,137	484,362

25.3.3. Արժեզրկում և պահուստավորման քաղաքականություն

Վարկերի արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների ուշացումները, վարկառուների դրամական հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Ընկերությունը արժեզրկման գնահատումը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

Արժեզրկման անհատական գնահատում

Ընկերությունը որոշում է յուրաքանչյուր անհատապես նշանակալի վարկի կամ փոխառության համապատասխան պահուստի չափը անհատական հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հասույթները, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելության արժեքը, սպասվող դրամական հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ, եթե չնախատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

Արժեզրկման խմբային գնահատում

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով, ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի և փոխառվածությունների գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ՝ դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին:

Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը հնարավոր է առաջանա վարկային պորտֆելում, նույնիսկ եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա: Արժեզրկման կորուստները գնահատվում են հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը՝ պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ տնտեսական

իրավիճակը, կորուստն առաջանալու և անհատապես բացահայտվելու մոտավոր ժամկետները, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները:

Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկեր

Ժամկետանց են համարվում այն վարկերը և փոխատվությունները, որոնց գծով առկա են վարկերի մայր գումարների և դրանց գծով հաշվեզրկված տոկոսների և այլ վճարների վճարումների ուշացումներ:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի ժամկետանց, բայց չարժեզրկված վարկեր:

2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության անհատապես արժեզրկված վարկերի ընդհանուր հաշվեկշռային արժեքը կազմում է 59,911 հազ. դրամ (2014թ.-ի դեկտեմբերի 31՝ 45,651):

25.4. Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների իրական արժեքի կամ դրանից ստացված դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի, արտարժույթի բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների փոփոխությունների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության չափն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Ընկերությունը կառավարում է շուկայական ռիսկը սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների, տոկոսադրույքների ժամկետայնության և արտարժույթի դիրքերի գծով, որոնք կանոնավոր կերպով վերահսկվում են:

25.4.1. Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում:

Ղեկավարությունը չունի ֆորմալ քաղաքականություն՝ որոշելու, թե Ընկերությունը որքանով պետք է ենթարկված լինի փոփոխական, և ինչքանով ֆիքսված դրույքներին: Այնուամենայնիվ, նոր փոխառությունների ձեռք բերման կամ տրամադրման դեպքում ղեկավարությունը օգտագործում է իր դատողությունը, որպեսզի որոշի, թե մինչև մարումն ընկած ակնկալվող ժամկետում Ընկերության համար որը կլինի առավել նպաստավոր՝ փոփոխական, թե ֆիքսված տոկոսադրույքը:

Ընկերությունը իր հաճախորդներին փոփոխական տոկոսադրույքով վարկեր չի տրամադրում:

25.5. Արտարժույթային ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով:

Ընկերությունը կիրառում է ողջամիտ պահպանողական քաղաքականություն՝ ուղղված արտարժույթային ռիսկի մեղմացմանը, որը սահմանվում է որպես արտարժույթի փոխարժեքի

փոփոխման արդյունքում ֆինանսական գործիքի արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկ: Ընկերությունը կրում է գերակայող արտարժույթի (առավելապես առաջին խմբում ներառված արտարժույթի) փոխարժեքի տատանման ռիսկը իր ֆինանսական դիրքի և դրամական միջոցների հոսքերի վրա: Ընկերությունը վերահսկում է արտարժույթային ռիսկը կառավարելով արժույթի բաց դիրքը հիմնված ՀՀ դրամի արժեզրկման և այլ մակրոտնտեսական ցուցանիշների վրա: Մակայն, համաշխարհային ֆինանսական շուկայում ԱՄՆ դոլարի փոխարժեքի էական տատանումները կարող են վնաս պատճառել Ընկերությանը:

Հաշվետու ամսաթվի դրությամբ ԿԲ սահմանած փոխարժեքները, ինչպես նաև տարվա ընթացքում կիրառված միջին փոխարժեքները ներկայացված են ստորև.

Դրամով	Միջին փոխարժեքներ		Հաշվետու ամսաթվի փոխարժեք	
	31/12/2015թ.	2014թ.	31/12/2015թ.	31/12/2014թ.
1 ԱՄՆ Դոլար	477.85	415.77	483.75	474.97
1 ԵՎԸ	530.82	552.16	528.69	577.47
1 Մեծ Բրիտանիայի ֆունտ ստերլինգ	731.00	684.62	717.69	737.68
1 Ռուսական Ռուբլի	7.89	10.99	7.28	8.15
1 Վրացական լարի	211.51	235.51	202.41	255.36

Ընկերության զուտ ենթարկվածությունը արտարժույթային ռիսկին 2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև.

Անվանում՝	Ընդամենը	ՀՀ դրամով	Ազատ փոխարկելի արժույթ	Հազ. դրամ	
				Այդ թվում ԱՄՆ դոլարով	Սահմանափակ փոխարկելի
	105	105	-	-	-
Դրամական միջոցներ					
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	70,280	18,297	51,983	51,865	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	907,375	907,375	-	-	-
Այլ ակտիվներ	5,578	5,257	321	-	-
Ընդամենը՝ Ակտիվներ	983,338	931,034	52,304	51,865	-
Պարտավորություններ					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	691,655	-	691,655	691,655	-
Այլ պարտավորություններ	23,171	8,634	14,537	16	-
Ընդամենը՝ Պարտավորություններ	714,826	8,634	706,192	691,671	-
Զուտ ենթարկվածությունը	268,512	922,400	(653,888)	(639,806)	-

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Արտարժույթ	31/12/2015թ		31/12/2014թ	
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
ԱՄՆ դոլար	5%	(32,694)	5%	(1,447)
ԱՄՆ դոլար	(5%)	32,694	(5%)	1,447

25.6. Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը դժվարություններ կունենա այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Ընկերության իրացվելիության վերահսկողությունը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ինչպես նաև ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել իրացվելիության հաշվեկշռային գործակիցները: Իրացվելիության կառավարման հետ կապված Ընկերության մոտեցումն է՝ որքան հնարավոր է, ունենալ բավարար իրացվելի միջոցներ իր ֆինանսական պարտավորությունները ժամանակին կատարելու համար՝ ինչպես նորմալ, այնպես էլ լարված պայմաններում, առանց իր համբավը ռիսկի ենթարկելու և առանց անընդունելի վնասներ կրելու:

25.6.1. Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ակտիվներն և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Ընկերության չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 25.8-ում:

Ժամկետ անց	Ըստ պահանջի և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթա-հանրագումար	1-ից 5 տարի և ավելի	5 տարուց ավելի	31/12/2015թ. Հազ.դրամ		Ընդամենը	
							12 ամսից ավելի, ենթա-հանրագումար	Ճշգրտում ներկա արժեքի բերում		
Ակտիվներ										
Կանխիկ դրամական և դրան համարժեք միջոցներ	70,385	-	-	70,385	-	-	-	-	70,385	
Վարկեր և փոխատվություններ	51,888	59,920	140,793	471,561	724,162	166,297	-	166,297	887,137	
հաճախորդների Այլ պահանջներ	-	3,035	-	-	3,035	-	-	-	3,035	
Ընդամենը	51,888	133,340	140,793	471,561	797,583	166,297	-	166,297	960,557	
Պարտավորություններ										
Բանկերի նկատմամբ	-	-	214,425	477,857	692,282	-	-	-	(626)	691,656

ստացված վարկերի գծով Այլ պարտավորություններ	-	344	34,366	-	34,710	22,084	-	22,084	-	56,794
Ընդամենը	-	344	248,791	477,857	726,992	22,084	-	22,084	(626)	748,450
Զուտ դիրք	51,888	132,996	(107,998)	(6,296)	70,590	144,213	-	144,213	(2,696)	212,107
Կուտակային ձեռքվածք	51,888	184,884	76,886	70,590	-	214,803	-	-	212,107	212,107

	31/12/2014թ. Հազ.դրամ								Ընդամենը	
	Ըստ պահանջի և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի և ավելի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար			
Ակտիվներ										
Կանխիկ դրամական միջոցներ	-	795	-	-	795	-	-	-	-	795
Պահանջներ բանկերի նկատմամբ	-	5,129	-	-	5,129	-	-	-	-	5,129
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	36,127	45,756	87,298	257,593	426,774	56,482	-	56,482	1,105	484,361
Այլ պահանջներ	-	5,119	-	-	5,119	-	-	-	-	5,119
Ընդամենը	36,127	56,799	87,298	257,593	437,817	56,482	-	56,482	1,105	495,405
Պարտավորություններ										
Բանկերի նկատմամբ ստացված վարկերի գծով	-	4,682	8,870	24,882	38,434	-	-	-	(19)	38,415
Իրավաբանական անձանց և հիմնարկներ ից ստացված փոխառությունների գծով	-	-	-	18,058	18,058	34,664	-	34,664	(27,004)	25,718
Այլ պարտավորություններ	-	266	4,523	-	4,789	-	-	-	-	4,789
Ընդամենը	-	4,948	13,393	42,940	61,281	34,664	-	34,664	(27,023)	68,922
Զուտ դիրք	36,127	51,851	73,905	214,653	376,536	21,818	-	21,818	28,128	426,483
Կուտակային ձեռքվածք	36,127	87,978	161,883	376,536	-	398,355	-	398,355	-	426,483

25.7. Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Հնկերության ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Հնկերության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ: Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է խորհուրդը, գործադիր մարմինը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և կորուստների նվազեցման առաջարկվող գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշների մշակում և կիրառում:

25.8. Իրական արժեքներ և հաշվեկշռային արժեքներ

Բոլոր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները հաշվարկվում են՝ դրամական հոսքերի զեղչման մեթոդով՝ հիմք ընդունելով գնահատված ապագա դրամական հոսքերը և նմանատիպ գործիքների համար զեղչման դրույքները հաշվետու ամսաթվի դրությամբ: Ղեկավարության կարծիքով ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին: Իրական արժեքների գնահատման նպատակն է ստանալ մոտավոր այն գումարը, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել իրազեկ և պատրաստակամ և անկախ կողմերի միջև գործարքում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և սուբյեկտիվ դատողությունների օգտագործումը, իրական արժեքը չպետք է մեկնաբանվի որպես մի գումար, որը հնարավոր կլինի ստանալ ակտիվների անհապաղ վաճառքից կամ պարտավորությունների մարումից:

Իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

	31/12/2015թ.		Հազ.դրամ 31/12/2014թ.	
	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք
Ֆինանսական ակտիվներ				
Կանխիկ դրամական միջոցներ	105	105	795	795
Պահանջներ բանկերի նկատմամբ	70,280	70,280	5,129	5,129
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	887,137	887,137	484,362	484,362
Այլ պահանջներ	-	-	126	126
Ընդամենը	957,522	957,522	490,412	490,412
Ֆինանսական պարտավորություններ				

	31/12/2015թ.		31/12/2014թ.	
	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	691,656	691,656	38,415	38,415
Փոխառություններ	-	-	25,718	25,718
Այլ պարտավորություններ (ծանոթ. 20)	23,171	23,171	3,011	3,011
Ընդամենը	714,827	714,827	67,144	67,144
Ջուտ դիրք	242,695	242,695	423,268	423,268

26. Կապիտալի կառավարում

Ընկերության կապիտալի կառավարման առաջնային նպատակն այն է, որ Ընկերությունը համապատասխանի հաստատված արտաքին պահանջներին, և որ Ընկերությունը պահպանի բարձր վարկային վարկանիշ և կապիտալի բարձր նորմատիվներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և մասնակիցների շահույթն առավելագույնի հասցնելու նպատակով:

Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը՝ կատարելով ճշգրտումներ, որոնք առաջանում են տնտեսական պայմանների և ռիսկի բնույթի փոփոխության հետևանքով:

Ընկերության կապիտալի մեծության նկատմամբ պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից:

Ընկերության Ընդհանուր կապիտալի նվազագույն չափը 2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 309, 979 հազ. ՀՀ դրամ:

Վավերացման ամսաթիվը՝ 14 հունվար 2016թ.

Գործադիր տնօրեն՝
Արտաշես Տոնոյան

Գլխավոր հաշվապահ՝
Մարինե Դարբինյան

  

ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի ղեկավարության հայտարարությունը

Մենք պատասխանատու ենք Ընկերության ֆինանսական վիճակը արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար:

Այսպիսով Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է՝

1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,

2. Հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,

3. Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների պահպանման, իսկ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար,

4. Հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,

5. Ֆինանսական հաշվետվություններն Ընկերության գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար,

6. Ընկերությունում գործում է ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգ,

7. Ընկերությունում ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ:

Հավաստիացնում ենք նաև, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին:

Գործադիր տնօրեն՝
Արտաշես Տոնոյան



Գլխավոր հաշվապահ՝
Մարինե Դարբինյան

